ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ 3

«ՀՀԿԳՄՍՆԷԱՃԱՊՁԲ-26/132» ծածկագրով էլեկտրոնային աճուրդով թվով 38 դպրոցների խոհանոցային կահույքի գնման գործընթացի գնահատող հանձնաժողովի արտահերթ նիստի

11.09.2026թ

ք. Երևան

Գնահատող հանձնաժողովի կազմը.

Հանձնաժողովի նախագահ՝ Հրանտ Մկրտչյան

Հանձնաժողովի անդամ՝ Արման Երանոսյան

Անահիտ Հակոբյան

Հանձնաժողովի քարտուղար՝ Արսեն Սողոմոնյան

1. Գնման գործընթացը չկայացած հայտարարելու մասին.

1.1 Ընդունել ի գիտություն, որ «ՀՀԿԳՄՍՆԷԱՃԱՊՁԲ-26/132» ծածկագրով էլեկտրոնային աճուրդի 4-րդ, 5-րդ, 8-րդ, 9-րդ, 10-րդ, 12-րդ, 13-րդ, 17-րդ, 19-րդ, 23-րդ, 32-րդ, 33-րդ, 35-րդ չափաբաժինների մասով ընտրված մասնակից «ՍՓԼԱՅ ԳՐՈՒՊ» ՍՊԸ-ին էլեկտրոնային եղանակով՝ eauction.armeps.am համակարգի միջոցով 03.10.2026թ. ներկայացվել է պայմանագիր կնքելու առաջարկ և կնքվելիք պայմանագրի նախագիծը, սակայն վերջինս «Գնումների մասին» ՀՀ Օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված ժամկետում (2026 թվականի սեպտեմբերի 10-ը ներառյալ) չի ներկայացրել 17-րդ չափաբաժնի մասով ստորագրված պայմանագիրը, որակավորման ու պայմանագրի ապահովումները:

1.2 Հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ Օրենքի 36-րդ հոդվածի 3-րդ մասը՝ «ՍՓԼԱՅ ԳՐՈՒՊ» ՍՊԸ-ին 17-րդ չափաբաժնի մասով զրկել պայմանագիր կնքելու իրավունքից:

Ընդունվել է որոշում՝ կողմ 3, դեմ 0:

1.3 Առաջնորդվելով սույն արձանագրության 1.2 կետով և ՀՀ կառավարության 04.05.2017թ N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 58-րդ կետով, գնման ընթացակարգը 17-րդ չափաբաժնի մասով հայտարարել չկայացած՝ «Գնումների մասին» ՀՀ Օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի հիման վրա, պայմանագիր չկնքելու հիմնավորմամբ:

Ընդունվել է որոշում՝ կողմ 3, դեմ 0:

1.4 Հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ Օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասը՝ գնման ընթացակարգը չկայացած հայտարարվելու մասին հայտարարությունը հրապարակելու օրվան հաջորդող տասներորդ օրը պատվիրատուի ղեկավարին ներկայացնել «ՍՓԼԱՅ ԳՐՈՒՊ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու վերաբերյալ որոշման նախագիծ:

Ընդունվել է որոշում՝ կողմ 3, դեմ 0:

Գնահատող հանձնաժողով՝

_____ Հրանտ Մկրտչյան

_____ Արման Երանոսյան

_____ Անահիտ Հակոբյան

_____ Արսեն Սողոմոնյան /քարտուղար/